ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

2021, ՀՀ Լոռու մարզ, ք.Վանաձոր, Մխիթար Գոշի 6, /0322/2-40-31, lori@court.am
ԴԴԱ-14 Ե- 69960 /22
15.12.2022թ.

Ֆ-7 318-22

ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՊԱՐՈՆ ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան.

Կից ուղարկվում է <<Լոռու մարզի հոգենյարդաբանական դիսպանսեր>> ՓԲԸ-ի դատահոգեբուժական փորձաքննությունների եզրակացությունների թիվ Բ 3440647120 հաշվի վավերագիրը և Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լ. Ալավերդյանի 03.11.2022թ.-ին ԼԴ2/0015/01/21 գործով կայացրած որոշումը:

Առդիր << 5 >> թերթ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ժ.ԱԼՉԱՆԳՅԱՆ

Կատարող՝ Գլխ. հշվապահ Ա. Օհանյան
հեռ.(0322) 2-10-55

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (արտադրանքների, ապրանքների առաքման)	[2] Սերիա	[3] Համար
14	Դեկտեմբեր	2022 թ.		Բ	3440647120
[4] Առաքման ամսաթիվ				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
14	Դեկտեմբեր	2022 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

	Պայմանագիր	
	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Արտադրանք, ապրանք առաքող անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	6	9	0	2	0	8	7		
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	6	9	0	2	0	8	7	/	1

[10] Անվանումը	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵԼՅԱՐԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
[11] Բանկային տվյալները	ՀԱՄԵՐԻԱԲԱՆԿ՝ ՓԲԸ N 1570015001210100
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[13] Վայրը, օրտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[14] Լրացուցիչ տվյալներ	

Արտադրող, ապրանք ձեռք բերող անձի

[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	5	8	3	2	4	1
[16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								

[17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ	
[18] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	N 900011000834
[19] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ Փ. 5	
[20] Լրացուցիչ տվյալներ		

[21] Ում միջոցով	Անուն, ազգանուն		
	Լիազորագիր	Համար	
		Ամսաթիվ	
[22] Մատակարարման (առաքման) եղանակը			
[23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների ներմուծման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5		

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Դրույքը (%)	Արժեքը	Տարա	Ակցիզ, հարկ	Ընդամենը հարկվող գումար
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Դատահոգեբուժական փորձաքննություններ՝ փորձագիտական եզրակացություն թիվ Լ12/0015/01/21 թ/գ.Սոֆյա Արտակի Կնիշ	հատ	1	45000		45000			

Հարկի վճարողի P3440647120

Գումարներ			
	45000	X	

Առաքող՝ PIROGOVA EMMA 6805680298
(անուն, ազգանուն)

Ստացող՝
(անուն, ազգանուն)

14/12/2022 14:57:57

ԼԴ2/0015/01/21

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

պաշտպանի ներկայացրած միջնորդությունը քննության առնելու մասին

03.11.2022թ. ք.Վանաձոր

Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, դռնփակ դատական նիստում նախագահությամբ Լ.Ալավերդյանի, քարտուղարությամբ Մ.Մարտիրոսյանի, մասնակցությամբ մեղադրող Հ.Մարգարյանի, պաշտպան Տ.Մկոյանի, ամբաստանյալներ Ս.Կնիշի, Ռ.Կնիշի, քննության առնելով պաշտպանի միջնորդությունը ամբաստանյալ Սոֆյա Կնիշի նկատմամբ ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին,

Պ Ա Ր Զ Ե Տ

2020 թվականի հուլիսի 10-ին ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտի 3-րդ բաժնի պետի տեղակալ Կ.Պետրոսյանը որոշում է կայացրել ՀՀ քրեական օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի և 168-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով թիվ 58214820 քրեական գործը հարուցելու մասին /հատոր 1-ին գ.թ. 139-140/:

Նույն օրը ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտի 3-րդ բաժնի պետի տեղակալ Կ.Պետրոսյանը որոշում է կայացրել թիվ 58214820 քրեական գործը ՀՀ գլխավոր դատախազության ԱԱԾ մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն ուղարկելու մասին ըստ քննչական ենթակայության փոխանցելու համար /հատոր 1-ին գ.թ. 141-142/:

2020 թվականի հուլիսի 30-ին ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության պետ Վ.Հովհաննիսյանը որոշում է կայացրել թիվ 58214820 քրեական գործն վարույթ ընդունելու մասին /հատոր 1-ին գ.թ. 145/:

2020 թվականի հուլիսի 31-ին ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Ա.Պողոսյանը որոշում է կայացրել թիվ 58214820 քրեական գործի նախաքննության կատարումը մի քանի քննիչի հանձնարարելու մասին /հատոր 1-ին գ.թ. 147-148/:

2020 թվականի հուլիսի 31-ին ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության պետ Վ.Հովհաննիսյանը որոշում է կայացրել թիվ 58214820 քրեական գործն վարույթ ընդունելու և նախաքննությունը շարունակելու մասին /հատոր 1-ին գ.թ. 149-150/:

2020 թվականի հոկտեմբերի 28-ին ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության պետի տեղակալ Դ.Ղազախեցյանը որոշում է կայացրել թիվ 58214820 քրեական գործը վարույթ ընդունելու մասին /հատոր 2-րդ գ.թ. 91/:

2020 թվականի նոյեմբերի 06-ին ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Մ.Հարությունյանը որոշում է կայացրել թիվ 58214820 քրեական գործը վարույթ ընդունելու մասին /հատոր 2-րդ գ.թ. 98/:

2020 թվականի նոյեմբերի 25-ին ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ավագ քննիչ Լ.Պառավյանը որոշում է կայացրել թիվ 58214820 քրեական գործն վարույթ ընդունելու մասին /հատոր 2-րդ գ.թ. 102/:

2021 թվականի փետրվարի 24-ին Սոֆյա Արտակի Կնիշին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 168-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 169.1-րդ հոդվածով և 169.1-րդ հոդվածով: Նույն օրը Ռիմմա Գեորգիի Կնիշին մեղադրանք է

առաջադրվել ՀՀ քրեական օրենգրքի 168-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով /հատոր 2-րդ գ.թ. 177-179, 180-182/:

2021 թվականի փետրվարի 25-ի որոշումներով Սոֆիա Արտակի Կնիշի և Ռիմա Գեորգիի Կնիշի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել «Ստորագրությունը չհեռանալու մասին» /հատոր 2-րդ գ.թ. 194-195, 196, 208-209, 210/:

2021 թվականի ապրիլի 23-ին քննիչը որոշում է կայացրել թիվ 58214820 քրեական գործից Ռիմմա և Սոֆյա Կրիշների, Էդուարդ Քրաղոսյանսի, Հասմիկ և Վարդան Մկրտչյանների վերաբերյալ մասը՝ նրանց մեղսագրվող արարքների վերաբերյալ դատավարական փաստաթղթերով գործից առանձնացնելու, անջատված մասը վարույթ ընդունելու և նախաքննությունը 33100821 համարով շարունակելու մասին /հատոր 1-ին գ.թ. 1-2/:

2021 թվականի ապրիլի 27-ին կազմվել է մեղադրական եզրակացությունը /հատոր 4-րդ գ.թ. 18-44/:

2021 թվականի ապրիլի 30-ին Լոռու մարզի դատախազի տեղակալ Վ.Դոլմազյանը որոշում է կայացրել մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին /հատոր 5-րդ գ.թ. 3-4/:

2021 թվականի ապրիլի 30-ին քրեական գործը մուտքագրվել է դատարան և նույն օրը մակագրվել է դատավոր Լ.Ալավերդյանին /հատոր 5-րդ գ.թ. 1-2/:

2021 թվականի մայիսի 03-ին որոշում է կայացվել քրեական գործը վարույթ ընդունելու մասին /հատոր 5-րդ. գ.թ. 5/:

2021 թվականի մայիսի 18-ին որոշում է կայացվել դատական քննություն նշանակելու մասին /հատոր 5-րդ. գ.թ. 23/:

2022 թվականի նոյեմբերի 03-ին կայացված դատական նիստի ժամանակ Ս.Կնիշի պաշտպան Տ.Մկոյանը ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին միջնորդություն ներկայացրեց՝ նշելով, որ թիվ ԼԴ1/0024/01/15 քրեական գործով՝ ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննության թիվ 235/15 եզրակացությամբ Սոֆյա Կնիշը ճանաչվել է սահմանափակ մեղսունակ: Փորձագետի եզրակացության համաձայն՝ <<Սոֆյա Կնիշը տառապել է <<Թեթև աստիճանի մտավոր հետամնացություն, աֆեկտիվ անկայունությամբ>> ախտորոշմամբ սակավամտությամբ: Փորձաքննվողի հոգեկան ոլորտի այնպիսի փոփոխություններն, ինչպիսիք են ոչ բարձր ինտելեկտուալ մակարդակը, դատողությունների պարզունակությամբ, թեթևակշռությամբ, մտածողության կոնկրետ տիպով, ընդհանրացման ցածր մակարդակով, էմոցիոնալ-կամային անկայունությունը, ինչպես նաև սեփական գործողությունների հետևանքները կանխատեսելու ունակության անբավարարությունը, իրավախախտումը կատարելու պահին սահմանափակել են Սոֆյա Կնիշի հնարավորությունները լիովին գիտակցելու իր գործողությունների վտանգավորությունը և ղեկավարելու դրանք:

Սոֆյա Կնիշին կատարածի նկատմամբ հարկ է ճանաչել սահմանափակ մեղսունակ: Իր ներկա հոգեկան վիճակով նա կարող է մասնակցել դատաքննչական գործողություններին, իսկ դատապարտվելու դեպքում կարիք ունի նյարդահոգեբույժի հսկողությանը կալանավայրի պայմաններում»:

Պաշտպանը նշեց, որ սույն քրեական գործով նախաքննության ժամանակ ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն չի նշանակվել:

Պաշտպանի պնդմամբ քանի որ Սոֆյա Կնիշն այլ քրեական գործով ճանաչվել է սահմանափակ մեղսունակ և սույն քրեական գործով նախաքննության ժամանակ ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն չի նշանակվել, ուստի գտնում է, որ անհրաժեշտ է նշանակվի ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն:

Ամբաստանյալները հայտնեցին, որ միանում են պաշտպանի միջնորդությանը:

Մեղադրող Հ.Մարգարյանը միջնորդության լուծումը թողեց դատարանի հայեցողությանը, նշեց, որ եթե դատարանը միջնորդությունը բավարարելու մասին որոշում կայացնի, նպատակահարմար է, որ այն իրականացվի Լոռու մարզի համապատասխան մասնագիտացված կենտրոնում:

Խորհրդակցական սենյակում քննարկելով միջնորդությունը դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Սոֆյա Արտակի Կնիշի մեղսունակությունը, նրա կողմից գործի հանգամանքների ճշմարտացի վերարտադրության, ընկալման հնարավորությունները և մի շարք հարցեր պարզելու համար անհրաժեշտ են հատուկ մասնագիտական գիտելիքներ, հետևաբար անհրաժեշտ է նրա նկատմամբ նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ «Լոռու մարզի հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲ ընկերության փորձագետներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով 1998 թվականի հուլիսի 01-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 313-րդ, 331-րդ և 345-րդ հոդվածներով դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Պաշտպանի միջնորդությունը ամբաստանյալ Սոֆյա Կնիշի նկատմամբ ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին բավարարել.

ամբաստանյալ Սոֆյա Կնիշի նկատմամբ նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն և դրա կատարումը հանձնարարել ՀՀ «Լոռու մարզի հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲ ընկերության փորձագետներին:

Պարզաբանման համար փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը՝

ա.մեղսագրվող արարքը կատարելու պահին 2018-2019թթ. ընկած ժամանակահատվածում, Ս. Կնիշը որևէ հոգեկան հիվանդությամբ տառապել է, թե ոչ, եթե այո, այդ հիվանդությունը զրկել է արդյոք նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու, դրանք ղեկավարելու հնարավորությունից:

բ. Ս.Կնիշը ներկայումս որևէ հոգեկան հիվանդությամբ, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարմամբ, այլ հիվանդագին վիճակով, տկարամտությամբ տառապում է, թե ոչ, եթե այո, ապա ինչ հիվանդությամբ և երբվանից, այդ հիվանդությունը կրել է արդյոք քրոնիկ բնույթ, թե ոչ, արդյոք նա կարող է գիտակցել իր գործողությունների վտանգավորությունը և կարող է ղեկավարել դրանք, թե ոչ:

գ. Եթե Ս.Կնիշը տառապում է հոգեկան հիվանդությամբ, նա բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կարիք ունի, թե ոչ, եթե այո՝ ապա ինչպիսի:

դ. Ս.Կնիշը մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ է, թե անմեղսունակ է:

ե. Ներկայումս Սոֆիյա Կնիշը իր ներկա հոգեկան վիճակով կարող է մասնակցել դատաքննչական գործողություններին, մասնակցել դատական նիստի, թե ոչ, ունակ է արդյոք ճիշտ ընկալել գործի համար կարևոր հանգամանքները, դրանք ճիշտ վերարտադրել և տալ ճիշտ ցուցմունքներ:

զ. Փորձագետին/փորձագետներին խնդրել պատասխանել այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետի/փորձագետների իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության և քրեական գործի քննության ապահովման համար:

է. Փորձագետ /ներ/-ին տրամադրել թիվ ԼԴ2/0015/01/21 քրեական գործը:

Փորձագետին/փորձագետներին պարզաբանել 1998 թվականի հուլիսի 01-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով սահմանված նրա/նրանց իրավունքների և պարտականությունների մասին, նախազգուշացնել կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Լ.ԱԼԱՎԵՐԴՅԱՆ